10402

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք։

# ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԳԸ

## ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ЗКСМЗ
2-21

ԱդրԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄ
Մանկական և Պատանեկական Գրականության
Հրատարակչություն

Բ Ա Գ Ո Ւ 1938

06. 2013
10402
ՀԽՍՀ ... Գոս. Պուբլ. Библиотека ՀՍԽՀ-ССР ... А. Мясникян
6206
38

Сдано в производство 5/X-38 г.
Подписано к печати 15/X-38 г.
Колич. печат. знаков—27.072
Колич. печат. листов—1

Թարգմանության պատասխանատու՝
Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

„III Интернационал“, Баку, ул. Саратовца Ефимова, 29.
Заказ № 3651. Тираж 5.000
Уполн. Главлита № 6392

ЭКСМЭ
Աշ
24 SEP 2006
1 DEC 2009

# ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԼԿՑԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Այն կապակցությամբ, վոր կոմյերիտական շատ կազմակերպությունները բավականաչափ չեն պատրաստել սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների կոմիտեների, քարտուղարների (այնտեղ, վորտեղ կոմիտեներ չկան), ցեխային, հերթափոխային և դրանց հավասարեցված կազմակերպությունների բյուրոների, կոմյերիտկազմակերպիչների յեվ խմբակազմակերպիչների ընտրությունները անցկացնելու համար, ՀամԼԿՅԵՄ սկզբնական կազմակերպություններում ընտրությունները սկսելու ժամկետները փոխադրել 1938 թվականի հոկտեմբերի 15-ը:

ՀամԼԿՅԵՄ սկզբնական կազմակերպություններում ընտրություններն ավարտելուց հետո ամենուրեք անցկացնել ղեկավար որգանների ընտրությունները բոլոր շրջանային, քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային և հանրապետական կոմյերիտական կազմակերպություններում:

Սկզբնական կազմակերպությունների, շրջանային, քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային և հանրապետական կազմակերպությունների ղեկավար կոմյերիտական որգանների հաշվետվություններն ու ընտրություններն սկսել 1938 թվականի հոկտեմբերի 15-ից և ավարտել 1939 թվականի հունվարի 25-ից վոչ ուշ:

Սահմանել ղեկավար կոմյերիտական որգանների հաշվետվություններն անցկացնելու հետևյալ կարգը.

սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների կոմիտեները, քարտուղարները (վորտեղ կոմիտեներ չկան) իրենց աշխատանքի մասին հաշիվ են տալիս կոմյերիտական ժողովներում.

շրջկոմները, քաղկոմները, ոկրուգային կոմիտեներն իրենց աշխատանքի մասին անպայման հաշիվ են տալիս կոմյերիտմիության շրջանային, քաղաքային և ոկրուգային կոնֆերանսներում.

մարզկոմները, յերկրկոմները և ազգային հանրապետությունների ԼԿՑԵՄ Կենտկոմներն իրենց աշխատանքի մասին պարտավորապես հաշիվ են տալիս կոմյերիտմիության մարզային, յերկրամասային կոնֆերանսներում և հանրապետական համագումարներում:

Կոմյերիտական բոլոր կազմակերպությունների կարևորագույն խնդիրը համարել առաջիկա ընտրություններում ապահովել ղեկավար կոմյերիտական որգաններում այնպիսի կոմյերիտականների ընտրությունները, վորոնք լիովին ստուգված են ժողովրդի թշնամիների դեմ մղվող պայքարում և ընդունակ են մինչև



վերջը պաշտպանելու Լենինի – Ստալինի կուսակցության գործը:

Ընտրությունները պետք է անցնեն կոմյերիտականների զգոնության հետագա բարձրացման, յերիտասարդության մեջ դաստիարակչական աշխատանքի ուժեղացման, կոմյերիտական անդամության մեջ որինակելի կարգ մտցնելու և կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքն ըստ ամենայնի ամրացնելու նշանի տակ:

Անհրաժեշտ է ղեկավար կոմյերիտական որգանների ընտրություններն անցկացնել բոլշևիկյան քննադատության և ինքնաքննադատության ծավալման և ներմիութենական դեմոկրատիան խստորեն պահպանելու հիման վրա:

Հաստատել ղեկավար կոմյերիտական որգանների ընտրություններն անցկացնելու կարգի վերաբերյալ հրահանգը, վերացնելով առաջները «Կոմսոմոլսկայա պրավդա»-ում 1938 թվականի ոգոստոսի 23-ին հրապարակված հրահանգը:

ՀամԼԿՑԵՄ ԿԵՆՏԿՈՄ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ղեկավար կոմերիտական որգանների ընտրությունները անցկացնելիս անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել ՀամԼԿԵՄ Կենտկոմի 3-րդ պլենումի հետևյալ վորոշմամբ.

«Կոմերիտական որգանների ընտրությունների ժամանակ արգելել ցուցակով քվեարկելը: Քվեարկությունը կատարել ըստ յուրաքանչյուր առանձին թեկնածության՝ կոմերիտականների համար ապահովելով թեկնածուներին բացարկելու և վերջիններին քննադատելու անսահմանափակ իրավունք:

Կոմերիտական որգանների ընտրությունների ժամանակ, սկսած սկզբնական կազմակերպության կոմիտեյի ընտրություններից և վերջացրած ՀամԼԿԵՄ Կենտկոմի ընտրություններով, սահմանել փակ (գաղտնի) քվեարկություն»:

2. Փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են՝



ա) կոմերիտական սկզբնական կազմակերպությունների պատվիրակները շրջանային, քաղաքային կոմերիտական կոնֆերանսների համար և շրջանային, քաղաքային, ոկրուգային կոնֆերանսների պատվիրակները մարզային, յերկրամասային կոմերիտական կոնֆերանսների և ազգային հանրապետությունների կոմերիտմիության համագումարների համար.

բ) սկզբնական կոմերիտական կազմակերպությունների կոմերիտական կոմիտեների անդամները, քարտուղարները և նրանց տեղակալները (այնտեղ, վորտեղ կոմիտեներ չկան).

գ) ցեխային, ֆակուլտետային, բաժանմունքային, հերթափոխային, տեղամասային կազմակերպությունների բյուրոների անդամները և կոմերիտկազմակերպիչները (այնտեղ, վորտեղ բյուրոներ չկան) և կոմերիտական խմբերի խմբկազմակերպիչները.

դ) շրջկոմների, քաղկոմների, ոկրուգային կոմիտեների, մարզկոմների, յերկրկոմների, ազգային հանրապետությունների կոմերիտմիության կենտկոմների պլենումների անդամները և վերստուգիչ հանձնաժողովների անդամները:

3. Բաց քվեարկությամբ ընտրվում են.

ա) սկզբնական կոմերիտական կազմակերպությունների կոմիտեների քարտուղարները և նրանց տեղակալները՝ կոմիտեների նիստերում.

բ) ցեխային, հերթափոխային, տեղամասային, ֆակուլտետային, բաժանմունքային կոմերիտական կազմակերպությունների բյուրոների քարտուղարները՝ բյուրոների նիստերում:

գ) շրջկոմների, քաղկոմների, օկրուգային կոմիտեների, մարզկոմների, յերկրկոմների, ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտկոմների քարտուղարները և բյուրոների անդամները համապատասխան կոմիտեների պլենումներում.

4. Կոմյերիտական կոնֆերանսի (ժողովի) նախագահությունը և մյուս ղեկավար օրգաններն ընտրվում են բաց քվեարկությամբ՝ հենց կոնֆերանսի, (ժողովի) կողմից սահմանվող քանակությամբ:

Կոնֆերանսի ղեկավար օրգաններում և նոր ընտրվող կոմյերիտական կոմիտեյի կազմի մեջ կարող են ընտրվել նաև կոմյերիտական կոնֆերանսների խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող պատվիրակները:

5. Ղեկավար կոմյերիտական օրգանների ընտրությունները կատարվում են համապատասխան կոմիտեյի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցման շուրջը կոնֆերանսի (ժողովի) կողմից վորոշումը լսելուց, քննարկելուց և ընդունելուց հետո:

Կոմյերիտական օրգանների հաշվետվությունները նախապես քննարկվում են կոմյերիտմիության համապատասխան կոմիտեների պլենումներում:

Հաշվետու զեկուցումների նախնական քննարկումը կոմյերիտմիության կոմիտեների պլենումներում, այդ կոմիտեների պլենումների անդամներին չի զրկում կոմյերիտական ժողովներում և կոնֆերանսներում կոմյերիտական կազմակերպության ղեկավարու-



թյանը քննադատելու համար յելույթ ունենալու իրավունքից:

6. Ընտրությունների անցկացնելուց առաջ կոմյերիտական կոնֆերանսը (ժողովը) սահմանում է ընտրվող կոմյերիտական օրգանների անդամների ու թեկնածուների քանակը:

7. Ղեկավար կոմյերիտական օրգանի նոր կազմի համար թեկնածություններ առաջադրվում են պատվիրակների կողմից և քննարկվում են անհատապես հենց կոմյերիտական կոնֆերանսում (կոմյերիտական օրգանի անդամի ու թեկնածուի համար առանձին):

Ցուցակների նախնական կազմումը և նրանց քըննարկումը կոմյերիտական կոնֆերանսից (ժողովից) դուրս չի թույլատրվում:

Ժողովի յուրաքանչյուր մասնակցին, կոնֆերանսի պատվիրակին, վորը ցանկանում է ղեկավար կոմյերիտական օրգանի կազմի համար առաջադրել այս կամ այն թեկնածությունը, կոնֆերանսի (ժողովի) նախագահությունը խոսք է տալիս թեկնածության մասին առաջարկություն մտցնելու և այդ առաջարկությունը հիմնավորելու համար:

Այն դեպքում, յերբ առաջարկություն է մտցվում թեկնածություններ առաջադրելը դադարեցնելու մասին՝ կոնֆերանսի (ժողովի) նախագահությունն այդ առաջարկությունը դնում է կոնֆերանսի (ժողովի) վորոշմանը և բաց քվեարկությամբ վորոշվում է նոր թեկնածությունների գրանցումը շարունակելու կամ դադարեցնելու հարցը:

8. Ղեկավար կոմյերիտական օրգանի կազմի համար առաջադրված բոլոր թեկնածությունների քննարկումը տարվում է այն կարգով, ինչպես վոր նրանք գրանցված են յեղել՝ ըստ կոմյերիտական կոնֆերանսի (ժողովի) նախագահությունում նրանց ստացման:

Թեկնածությունների անհատական քննարկման ժամանակ պետք է անսահմանափակ իրավունք ապահովվի ղեկավար կոմյերիտական օրգանի կազմի համար առաջադրված թեկնածությունների բացարկման համար, այսինքն յուրաքանչյուր պատվիրակ կարող է բացարկել առաջադրված թեկնածությունների ուզած քանակություն և յուրաքանչյուր առաջադրված թեկնածության վերաբերյալ կարող են արտահայտվել անսահմանափակ քանակությամբ պատվիրակներ, ինչպես «թեր», այնպես էլ «դեմ»:

Այն դեպքում, յերբ առաջարկություն է մտցվում այս կամ այն թեկնածության քննարկումը դադարեցնելու մասին, կոնֆերանսը (ժողովը) բաց քվեարկությամբ լուծում է տվյալ թեկնածության քննարկումը դադարեցնելու կամ շարունակելու հարցը:

Ղեկավար կոմյերիտական օրգանների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու իրավունքով օգտվում է ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անդամ՝ անկախ նրա տարիքից:

Կոմյերիտական կոնֆերանսի խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող պատվիրակները և ՀամԼԿՅԵՄ անդամության թեկնածուները կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների ժողովներում և կոմյերիտա-



կան շրջանային ժողովներում ղեկավար կոմյերիտական օրգանների համար թեկնածությունները քննարկելիս օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

9. Այն թեկնածություններին քննարկելուց հետո, վորոնց նկատմամբ բացարկումներ են յեղել, անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում, բաց քվեարկության կարգով վորոշել՝ տվյալ թեկնածությունը մտցնել, թե չմտցնել այն ցուցակի մեջ, վորը կազմվում է կոմյերիտական կոնֆերանսի (ժողովի) կողմից՝ ղեկավար կոմյերիտական օրգանների փակ (գաղտնի) ընտրություններն անցկացնելու համար:

Դրա հետ միասին պետք է հաշվել ինչպես «բացարկման օգտին», այնպես էլ «բացարկման դեմ» յեղած բոլոր ձայները:

Այն թեկնածությունները, վորոնց դեմ բացարկումներ չեն յեղել, բաց քվեարկության չեն դրվում և ցուցակի մեջ են մտցվում՝ ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու համար:

10. Ղեկավար կոմյերիտական օրգանների ընտրությունները անցկացնելուց առաջ, կոմյերիտական կոնֆերանսը (ժողովը) քվեարկության արդյունքները հաշվելու համար բաց քվեարկությամբ ընտրում է հաշվային հանձնաժողով՝ կոնֆերանսի (ժողովի) կողմից սահմանվող քանակով: Հաշվային հանձնաժողովի անդամներն ընտրում են հաշվային հանձնաժողովի նախագահ:

Քվեարկությունից առաջ հաշվային հանձնաժողովի նախագահը պարտավոր է բացատրել կոմերիտական կոնֆերանսի (ժողովի) պատվիրակներին փակ (գաղտնի) քվեարկությունն անցկացնելու կարգը:

Հաշվային հանձնաժողովը փակ քվեարկությունից առաջ պարտավոր է նախապատրաստել ընտրական արկղները և անձամբ դրանք կնքել կամ կողպեքով կողպել:

11. Ղեկավար կոմերիտական օրգանների ընտրությունների ժամանակ փակ (գաղտնի) քվեարկությունը պետք է անցկացվի կոմերիտական կոնֆերանսի փակ նիստում՝ միայն վճռական ձայնի իրավունք ունեցող պատվիրակների ներկայությամբ:

12. Վճռական ձայնի իրավունք ունեցող յուրաքանչյուր պատվիրակ ստանում է այն թեկնածությունների ցուցակի մի օրինակ, վորոնք կոնֆերանսի (ժողովի) կողմից նախանշված են ղեկավար կոմերիտական օրգանի համար: ՀամԼԿՅԵՄ անդամի պատվիրակային մանդատի վրա կամ կոնֆերանսում (ժողովում) ներկա գտնվող կոմերիտմիության անդամների ցուցակներում պետք է նշան արվի այն մասին, վոր ՀամԼԿՅԵՄ անդամը մասնակցել է քվեարկության:

13. Յուրաքանչյուր պատվիրակ փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ թեկնածությունների ցուցակից իրավունք ունի ջնջել առանձին թեկնածություններ կամ ավելացնել նոր թեկնածություններ



ղեկավար կոմերիտական օրգանի կազմի համար, անկախ նրանից, թե կոնֆերանսը (ժողովը) ինչ քանակություն է սահմանել կոմերիտական օրգան ընտրելու համար:

14. Քվեարկությունից հետո հաշվային հանձնաժողովը բացում է ընտրական արկղները և, դուրս չգալով կոնֆերանսի (ժողովի) շենքից՝ հաշվում է քվեարկության արդյունքները՝ կոմերիտական օրգանների անդամներին առանձին յեվ կոմերիտական օրգանների անդամության թեկնածուներին առանձին:

Հաշվային հանձնաժողովը պարտավոր է հաշվել բոլոր «թեր» և «դեմ» ձայները՝ յուրաքանչյուր թեկնածության առանձին:

Ձայները հաշվելուց հետո, հաշվային հանձնաժողովն արձանագրություն է կազմում, վորի մեջ գրանցում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածության առանձին, և հանձնաժողովի բոլոր անդամներն ստորագրում են այդ արձանագրությունը:

Վոչ վոք իրավունք չունի գտնվել այն շենքում, վորտեղ կատարվում է հաշվումը, բացի հաշվային հանձնաժողովի անդամներից:

15. Հաշվային հանձնաժողովը կոմերիտական կոնֆերանսի (ժողովի) նիստում զեկուցում է քվեարկության արդյունքն ըստ յուրաքանչյուր թեկնածության առանձին:

Ղեկավար կոմերիտական օրգանի կազմի մեջ ընտրված են համարվում այն թեկնածությունները,

վորոնք ձայների մեծամասնություն են ստացել, բայց կոնֆերանսում ներկա գտնվող վճռական ձայնի իրավունք ունեցող պատվիրակների ձայների կեսից վոչ պակաս։

16. Փակ (գաղտնի) քվեարկության բոլոր նյութերը (թեկնածությունների ցուցակները, գրավոր դիմումները, քվեարկության հաշվումները և այլն) պետք է պահվեն կոմյերիտական օրգաններում՝ գաղտնի փաստաթղթերի իրավունքով։

ՀամԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄ

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0189134

Գինը 5 կ.

**Rəhʙər qomsomol orqanlarь seckilərinin kecirilməsi haqqьnda**

**YILQGI MQ QƏRARЬ VƏ INSTRUQSIJA**

Az LQGI MQ Uşaq və Gənçlər Ədəʙijjatь Nəşrijjatь
Bakь — 1938